Սոնա Մելքոնյան

ԷԹՆԻԿ ԶՏՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ՀԱՅԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ (1988-1991 ԹԹ.)

Բանալի բառեր՝ Հայաստան, Խորհրդային կարգերի հաստատում, Արցախ, Ադրբեջան, «Ղարաբաղ» կոմիտե, «Գորշ գայլեր», օգնություն, Ղարաբաղյան հարց:

Երկրում հռչակված վերակառուցումը անցնում էր դժվար, նաև որոշ տեղերում անանցանելի արգելքներով: Ամբողջ երկրով մեկ հույս էին տածում, որ հրապարակայնությունը հնարավորություն կընձեռի արագորեն արմատախիլ անել կյանքի տարբեր ասպարեզներում արմատացած դառը հարցերը, գտնել ճգնաժամից դուրս գալու միջոցներ, բայց ճգնաժամը միայն խորանում էր ու խորանում:

Դեռևս 1920 թ. ապրիլին Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատումով Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովը Ստալինի աջակցությամբ ու հովանավորությամբ պահանջում էր անվերապահորեն Լեռնային Ղարաբաղը, Նախիջևանը և Զանգեզուրը միացնել Ադրբեջանին: Ն. Նարիմանովի զավթողական նման պահանջը հիմնավորվում էր դաշնակցական Հայաստանի հետագա «հզորացումը» կանխելու և Ադրբեջանում խորհրդային իշխանությունը իբրև թե «դիսկրիմինացիայի» չենթարկելու համար[1]:

Նշենք նաև, որ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատվելուց մեկ օր առաջ՝ 1920 թ. դեկտեմբերի 1-ին, Ադրբեջանի հեղկոմը հատուկ դեկլարացիայով նախ՝ ողջունեց Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը, ապա՝ Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը ճանաչեց Խորհրդային Հայաստանի բաղկացուցիչ մաս: Այսպիսով՝ «Խորհրդային Հայաստան» օրաթերթում հրապարակված դեկրետով ազդարարվում էր, որ Լեռնային Ղարաբաղը այսուհետ Հայաստանի սոցիալիստական հանրապետության անբաժանելի մասն է[2]: Իհարկե, դրանից հետո Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովը դեմ դուրս եկավ դրան և պատճառաբանեց, որ «հակախորհրդային խմբերը» դրա հետևանքով կշատանան տարածաշրջանում: Աշխարհի դիվանագիտական պրակտիկայում չկա մի դեպք, երբ սուվերեն հանրապետությունների միջև սահմանային հարցերը որոշվեն ոչ թե դիվանագիտական ճանապարհներով , այլ կուսակցական որոշումներով:

Նշվածը հիմք հանդիսացավ, որ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը իրավացիորեն բողոքի ստալինյան նման որոշման դեմ, նաև այն պատճառով, որ կուսակցական մարմինը նման որոշում ընդունելու իրավունք չուներ: Սակայն պետք էր անցներ տասնամյակներ, որ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը կարողանար արձանագրեր (1990 թ., փետրվարի 13), որ Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը որոշվել է ոչ սահմանադրական և իրավասություն չունեցող կուսակցական մարմնի՝ ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի կամայական որոշմամբ[3]:

1988 թ. փետրվարի 20-ին մեծ ջանքերի շնորհիվ հրավիրվեց ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի արտահերթ նստաշրջանը, որը, հենվելով իր սահմանադրական իրավունքի վրա, քննարկեց Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմից հանելու և Հայաստանի կազմի մեջ մտցնելու հարցը: Վաղուց ժամանակն էր, որ Լեռնային Ղարաբաղի հայության ճակատագրի վրայից մաքրվեր այն խորը և կնճռոտ սպիները, որոնք կային վաղուց, և Ղարաբաղի բնակչությունը ձեռք բերեր երկրամասը ինքնուրույն տնտեսապես զարգացնելու, ազգային-մշակութային նվաճումների լիիրավ տեր դառնալու հնարավորություն [4] : Լեռնային Ղարաբաղի բնակչությունը քաջ

[1] Տե՛ս Խոջաբեկյան Վ., Արցախը փորձության ժամին, Ե., 1991, էջ 6:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 7:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 8:
[4] Տե՛ս «Սովետական Հայաստան», 21 փետրվարի, 1988թ:

գիտակցում էր, որ հարցի լուծման միակ ճիշտ որոշումը երկրամասը Հայաստանի հետ վերամիավորումն է:

Երևանում սկսվեցին հանրահավաքներ «Թատերական» հրապարակում, և անընդհատ աճում էր մասնակիցների թվաքանակը: Հանրահավաքներին մասնակցում էին գրող Ս. Կապուտիկյանը, ԳԱԱ նախագահ Վ. Համբարձումյանը և շատ շատերը: Այդ օրերին ԽՄԿԿ գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովը հանդիպեց հայ մտավորականության ներկայացուցիչ Ս. Կապուտիկյանի և Զ. Բալայանի հետ, որպեսզի սուտ խոստումներով հանգստացնի Երևանում և Լեռնային Ղարաբաղում ծայր առած «ոգևորությունը»: Ավելին՝ նա հորդորեց մտածել այն 400 հազար հայերի մասին, որոնք գտնվում էին Ադրբեջանի կազմում: Այսինքն՝ Մ. Գորբաչովը «հուշեց» ադրբեջանցիներին, որ կարելի է մտածել այդ 400 հազար հայերի ոչնչացման մասին: Այդ օրերին պարզ դարձավ Հայաստանի իշխանությունների կտրված լինելը ժողովրդից: Նրանք չուզեցին և չկարողացան համախմբել շարժումը, ավելին՝ լրագրողներին չէին թույլատրում լուսաբանել այդ օրերին տեղի ունեցող այդքան կարևոր իրադարձությունները:

Հայաստանի և Ղարաբաղի համաժողովրդական ազատագրական շարժումը համախմբելու նպատակով 1988 թ. սկզբներին Ի. Մուրադյանի նախաձեռնությամբ ստեղծվեց «Ղարաբաղ» կոմիտեն: Հանրապետության գրեթե բոլոր շրջաններում ստեղծվեցին նման կոմիտեներ՝ շարժմանն ավելի կարգավորված բնույթ տալու համար[1]:

1988 թ. փետրվարին Արցախի ժողովրդի ինքնորոշման օրինական պահանջին Ադրբեջանը հակադարձեց՝ բռնի և բիրտ ուժ գործադրելով:

1988-1990 թթ. Սումգայիթում, Կիրովաբադում, Բաքվում, Խանլարում տեղի ունեցան հայերի զանգվածային ջարդեր: Ադրբեջանի հայատյաց քաղաքականությունը և բռնաճնշումները, տանում էին նրան, որ հայերը հարկադրված հրաժարվեին իրենց տներից, թողնեին բնակավայրերը, ավելին՝ հեռանային Լեռնային Ղարաբաղից: Այդ օրերին Ադրբեջանի շատ ղեկավարների կարգախոսն էր՝ «Մահ հայերին»: Մինչ կսկսեին ջարդերը, ադրբեջանցիները ակտիվորեն հատուկ լուրեր էին տարածում այն մասին, որ հայերը «դաժանություններ» են իրականացնում ՀԽՍՀ և ԼՂԻՄ սահմաններում բնակվող ադրբեջանցիների նկատմամբ[2]: Իբրև թե այդ պատճառով, ադրբեջանցիներն անցան դաժան գործողությունների: Հայ բնակչության ջարդերը տևական բնույթ ստացան:

1988 թ. փետրվարի 27-ին ադրբեջանական ոհմակը, նախօրոք ծրագրավորած, տեղի բնակչության աչքի առաջ կազմակերպված ձևով, իրականացրեց հայ ազգաբնակչության կոտորածը, որը տևեց մինչև փետրվարի 29-ը[3]: Բնականաբար, այս իրադարձություններն ուղղորդվում էին նաև բռնություններով, տարիքով կանանց և անչափահաս աղջիկների բռնաբարություններով, թալանով: Նրանք նախօրոք անջատել էին հեռահաղորդակցության միջոցները. ամեն տեսակի կապը արտաքին աշխարհի հետ: Խուժանը, գազանաբար տանջամահ անելով, սպանում էր մարդկանց իրենց բնակարաններում, փողոցներում և այլուր: Հայտնի է, որ միայն փետրվարի 29-ի գիշերը Մոսկվան զորք մտցրեց Սումգայիթ, որին մեծ դժվարությամբ հաջողվեց դադարեցնել վայրագությունները և քաղաքից դուրս հանել կենդանի մնացած հայերին: Հայերին չէին թույլատրում տեղափոխվել Ղարաբաղ: Նրանք մեկնում էին Կրասնոդար, այնտեղից նոր միայն Հայաստան: Այս ամենից հետո կենտրոնական իշխանությունները թաքցնում էին ճշմարտությունը հասարակությունից՝ այս ողբերգությունները որակելով միայն խուլիգանական ոտնձգություններ: Նույն Մոսկվայի ադրբեջանամետ քաղաքականության շնորհիվ սումգայիթյան դեպքերը մնացին անպատիժ, և դա բռնի տեղահանությունների ազդակ հանդիսացավ ու շարունակվեց բռնագաղթը:

Սումգայիթի հայության նկատմամբ բռնության անպատժելիությունը նպաստեց հետագայում նման դեպքերի զարգացմանը: Ադրբեջանի տարբեր վայրերում ևս հայերը սկսեցին ենթարկվել հարձակումների: 1988 թ. մայիսին Շուշիի կուսշրջկոմի նախա-

---

[1] Տե՛ս Մինասյան Է. Սումգայիթի և Բաքվի ջարդերի Ադրբեջանական կեղծարարությունը, հանրապետական գիտաժողով, հիմնադրույթներ, Պատմություն և մշակույթ, Ե., 2011թ., էջ 22- 24:

[2] Տե՛ս Նույն տեղում, էջ 24:

[3] Տե՛ ս «Сумгаит… Геноцид… Гласность?»,Сборник документов, Е.,1990, с. 12-14.

ձեռնությամբ սկսվեց հայերի բռնագաղթը քաղաքից, սեպտեմբերին արյունալի դեպքեր տեղի ունեցան Խոջալու գյուղում, Շուշիի ամբողջ հայ ազգաբնակչությունը վտարվեց քաղաքից: Բռնությունների հաջորդ ալիքը սկսվեց 1988 թ. նոյեմբերին: Ադրբեջանական վայրագություններին ենթարկվեց Կիրովաբադի, Մինգեչաուրի, Շամխորի, Խանլարի, Դաշքեսանի, Վարդաշենի, Շաքիի հայ ազգաբնակչությունը: Արդեն նոյեմբերի վերջերին այս վայրերի հայ բնակիչները բռնեցին գաղթի ճանապարհը, նրանք հեռացան՝ իրենց հետ չտանելով ոչինչ, իսկ ունեցվածքը թալանվեց ադրբեջանցիների կողմից:

Նույնիսկ այդ ժամանակ կենտրոնը, չցանկանալով ընդունել տեղի ունեցածը, ձևական որոշում ընդունեց՝ բռնագաղթվածներին հետ վերադարձնել իրենց բնակության նախկին վայրերը: Ժողովրդական պատգամավորների համագումարը անգամ չկարողացավ լուծում տալ հարցին: Կենտրոնի բռնած դիրքը հանգեցրեց արյունալի ընդհարումների Թուրքմենիայում, Ֆերգանայում, Նոր Ուզենում և այլուր: Այս ամենը ևս մեկ անգամ ցույց տվեց, որ ազգային հարցը պահանջում է արագ և անմիջական լուծում[1]:

1990 թ. հունվարի 13-ից մինչև 20-ը Բաքվում ձեռնարկվեցին նոր զանգվածային ջարդեր, որոնք Ադբեջանում հայերի ցեղասպանությունն ավարտին հասցնելու ամենավճռական փուլը եղան, իսկ խորհրդային իշխանությունները դեն էին նետել ինտերնացիոնալիզմի դիմակը և հրահրում ու նաև հովանավորում էին ադրբեջանցիներին: Մինչև ջարդերի սկսել, երբ փողոցում, տրանսպորտում հայերին տեսնում և ճանաչում էին, նրանց ծեծի էին ենթարկում[2]:

Հետագայում հայտնի դարձավ Սումգայիթում, Բաքվում և մյուս վայրերում ադրբեջանական խուժանի կողմից իրականացված էթնիկ զտման քաղաքականությունը, որը կատարեցին նախօրոք լավ մտածված ու մշակված ծրագրի իրականացումով, Ադրբեջանին և՛ ֆինանսապես և՛ բարոյապես իր աջակցությունը ցույց տվեց «եղբայր» Թուրքիան: Սկզբնական շրջանում պաշտոնական Անկարան ցույց էր տալիս, որ ղարաբաղյան հարցի շրջանակներում նա չեզոք է և ավելին՝ հայտարարում էր, թե իբր Ղարաբաղի հարցը Խորհրդային Միության խնդիրն է, ապա ավելի ուշ նա միջամտեց խնդրին և՛ խորհուրդներով, և՛ ռազմական գործողությունների ժամանակ: Առաջին ռազմական օգնությունը Թուրքիայից Ադրբեջան հասավ 1990 թ.-ի հունվարի 24-ին [3] : Թուրքիան ուղարկեց նաև տասնյակ ուժեր «Գորշ գայլեր» (Bozkurd) խմբավորման մահապարտ խմբերից: 1991 թ.-ի առաջին կեսին թուրքական «Milliet» թերթը գրեց, որ եթե հայերը փորձեն իրականացնել համատարած հարձակում, ապա Թուրքիան պետք է խառնվի խնդրի լուծմանը: Թուրքական կառավարությունը այդ մասին տեղյակ է պահել նաև Մոսկվային:

«Յուրաքանչյուր իշխանություն, ինչ էլ որ լիներ, այդպես կվերաբերվեր»,-ասվում է թերթում:[4]

Բաքվի կոտորածների նախօրյակին, հեռուստատեսության էկրանին իր շքախմբով հայտնվեց ազգի մյուս «հերոսը»՝ վեց թե ութամյա կրթությամբ Ն. Փանահովը: Նա անթաքույց ատելությամբ, չարությամբ հայտարարեց, թե այո՛, քաղաքում ջարդեր են «այդ ամենը ցավալիորեն ծանոթ էր և արդեն սովորական, որը լոկ դատողություններն էր Վեզիրովի մասին, որ նրան՝ որպես ղեկավարի պետք է հարգել, որ նրան «Վեզիրյան» կոչողները ազգի թշնամիներ են»: Էպիկենտրոնը Բաքվի հենց սրտում էր՝ 26 կոմիսարների անվան շրջանում: Այդ նույն շրջանում, ուր վաղուց արդեն պատշգամբից նետել էին Շահումյանի կիսանդրին և պինդ փակել էին նրա տուն-թանգարանի դուռը՝ առաջարկելով այնտեղ բացել ժողովրդական ճակատի կանանց կամ մի այլ բաժին:

Սարսափելի ջարդերի ընթացքում այլանդակում էին մարդկանց դեմքերը, ջարդում գլուխները, օրինակ՝ Ալեքսանդր Կիրակոսյանը, որը 38-40 տարեկան էր,

---

[1] Տե՛ս Հովսեփյան Յ., «Հայերի ցեղասպանությունը Ադրբեջանում (1918-1990 թթ.)», Հայոց ցեղասպանություն ուսումնասիրություններ, Ե., 2001, էջ 207:
[2] Տե՛ս Демоян Г. Турция н карабахский конфликт в конце 20-начала 21 веков, Ереван, 2006,с. 107-109.
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 108:
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 109:

վերհիշում է, թե ինչպես իր հարևան կանանցից մեկին պատուհանից ցած գցեցին, հետագայում Ալեքսանդրը այդ կնոջը հանդիպեց արյան մեջ կորած, հազիվ խոսելիս, ջարդված դեմքով ու շուրթերով: Այդ կինը հունվարի 15-ին լաստանավով մեկնեց Կրասնովոդսկ:

Մանրամասն ծրագրավորված ջարդերի գործողություններում բժիշկներն էլ իրենց առավելությունն ունեին՝ չբուժել, բայց լինել «կարգապահ»: Մահվան վկայական տալիս լինել զգույշ և հետքեր չթողնել: Կար արդեն Սումգայիթյան փորձը: Եթե հավատանք այդ ծիծաղելի վկայականներին, ապա մահը Բաքվի հայերին վրա է հասել հիմնականում սրտի անբավարարությունից, արնազեղումից, ուղեղի կաթվածից:

Զավեշտական և միամիտ էր Սումգայիթում և Բաքվում երեք մարդասպանների՝ Ի. Իսմայիլովի, Ա. Ահմեդովի, Յ. Զաֆարովի գործողությունները որակել որպես «խուլիգանական մղումներից դրդված», երբ խոսքը ճարպիկ, մտածված բանդիտիզմի, հայերի նկատմամբ ճիզվիտական ծաղրանքի, կանանց բռնաբարության, անդամահատվածներին և սպանվածներին խարույկում այրելու մասին է[1]: Եթե Մ. Գորբաչովի հայտարարության համաձայն բանակը Սումգայիթ մտավ երեք օր անց, ապա Բաքու մտավ մեկ շաբաթ ուշացումով, սակայն զորքը Բաքու մտավ այն պատճառով, որ արդեն իրավիճակը վտանգ էր սպառնում խորհրդային կարգերին և ռուս ազգաբնակչությանը: Բնականաբար, այս անգամ նույնպես, պաշտոնական լրատվամիջոցները փորձեցին կոծկել հայության սպանդը և հայտարարեցին, որ զոհվել են 100-ից ավելի հայեր: Ցավոք այս ոճրագործություններին զոհ գնացած հայերի ճշգրիտ թվաքանակը հնարավոր չէ պարզել:

Բաքվի ջարդերից հետո «ինտերնացիոնալ» քաղաքը մաքրազարդվեց 200 հազար հայերից, նրանք ապաստան գտան Հայաստանում, ԽՍՀՄ տարբեր հանրապետություններում: Այս արյունալի դեպքերից հետո Ադրբեջանի տարածքում այլևս հայ չմնաց: ԽՍՀՄ տարբեր պաշտոնական ատյաններում ամիսներ շարունակ քննարկվում էր ոչ թե հայերի ցեղասպանությունը, այլ խորհրդային զորքերի մուտքը քաղաք և ընդհարումները ադրբեջանցիների հետ[2]: Ադրբեջանում 1988-1990 թթ. հայերի ցեղասպանությունը մեկ անգամ ևս ապացուցեց, որ պանիսլամիզմի և պանթուրքիզմի գաղափարախոսությունները խոր արմատներ էին գցել այդ հանրապետությունում: 1960-ական թ. սկսած մինչ օրս Ադրբեջանի գիտնականները փորձում են նենգափոխել պատմությունը, և Ղարաբաղի տարածքը հայտարարել ադրբեջանական՝ հայոց և հարևան ժողովուրդների պատմությունը և մշակույթը դարձնելով իրենցը, երիտասարդներին դաստիրակելով պանթյուրքիզմի գաղափարներով ու թշնամանք դեպի հայ ազգը:

Պանթյուրքիզմը ավելի վառ արտահայտվեց այն ժամանակ, երբ ստեղծվեց ազգային ճակատ, նրա ղեկավարներից մեկը թուրքական մի թերթի հարցազրույց տալիս ասել է, որ իրենց նպատակը ադրբեջանական, թուրքական դեմոկրատական հանրապետության ստեղծումն է: Դրա վառ ապացույցն էլ այն է, որ իրենց հայտարարություններում ղեկավարները հայտարարում են, որ պատմական «Իրանական» Ադրբեջանն իրենց տարածքն է: Ազգային ճակատի գաղափարախոսներից մեկի հայտարարությամբ Ադրբեջանը, Ղազախստանը, Կիրգիզիան, Բաշկիրիան, Պովոլժիեն, Յակուտիան, Ղրիմը, Թաթարստան և Հյուսիսային Կովկասը թուրքական հողեր են, և իրենք այն որևէ մեկի չեն զիջի:

Сона Мелконян, Политика этнической чистки в отношении армян в Советском Азербайджане.- В статье кратко описываются совершенные в Советском Азербайджане массовые убийства, грабежи и депортация армян. Представляются также история установления советской власти в Азербайджане в 1920г., когда Азербайджан получил поддержку от Иосифа Сталина, а также последующая политика и события.

[1]Տե՛ս ՄովսեսովաԻ, նշվ. աշխ., էջ 14-117:
[2] Տե՛ս Հովսեփյան,Հայերի ցեղասպանությունը Ադրբեջանում(1918-1990թթ), Հայոց ցեղասպանություն, ուսումնասիրություններ, Ե., 2001, Հայոց ցեղասպանություն, էջ 208-209:

В статье говорится о произошедших в 1988-1990 годах массовых убийствах армян в Сумгаите, Баку, Кировабаде, Ханларе, и дается краткий анализ апрельской четырехдневной войны 2016 года.

Sona Melkonyan, The policy of ethnic cleansing against Armenians in the Soviet Azerbaijan (1988-1991),-In the article you can find materials on massacres, looting, deportation of Armenians in Soviet Azerbaijan.There are some points about the confirmation of political structure of Soviet Azerbaijan in 1920, when Azerbaijan got support from Joseph Stalin, as well as the politics and events following it. In addition, the massacres in Sumgait, Kirovabad, Baku, Khanlar in 1988-1990 as well as brief analysis of 2016 four days' war in April are presented in the article.